«Ավտովերակնքում» ծառայության պայմաններ

1. «Ավտովերակնքում» ծառայությունը ֆիզիկական անձանց մատուցվող «All in տարեկան»/ «All in տարեկան գործընկեր», «Wi-Fly տարեկան»/«Wi-Fly տարեկան գործընկեր» ծառայությունների/սակագնային փաթեթների՝ 1 տարով ավտոմատ վերակնքման ծառայություն է:
   1.1. Թե՛ գործող, թե՛ նոր Բաժանորդը, միանալով «All in տարեկան»/ «All in տարեկան գործընկեր», «Wi-Fly տարեկան»/«Wi-Fly տարեկան գործընկեր» ծառայությունների/սակագնային փաթեթներից մեկին 1 տարի բաժանորդագրության պայմանով, սկսում է օգտվել Ծառայություններից «All in տարեկան»/ «All in տարեկան գործընկեր», «Wi-Fly տարեկան»/«Wi-Fly տարեկան գործընկեր» սակագնային փաթեթների սակագներով (ամսավճարներով) և պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի շարունակ օգտվել All in տարեկան»/ «All in տարեկան գործընկեր», «Wi-Fly տարեկան»/«Wi-Fly տարեկան գործընկեր» սակագնային փաթեթներից՝ ստանալով փաթեթով տրամադրվող առավելությունները: Եթե Բաժանորդը Ծառայություններին միացել է ավտոմատ վերակնքման պայմանով, ապա 1 տարի անց Բաժանորդի պայմանագիրը՝ գործող պայմաններով, ավտոմատ վերակնքվում է ևս 1 (մեկ) տարով (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրով), և Բաժանորդը շարունակում է ստանալ տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված Ծառայությունների առավելությունները: Սույն կանոնը գործում է յուրաքանչյուր հերթական երկարաձգման համար. բաժանորդային պայմանագիրը 1 տարի պարտադիր ժամկետով ավտոմատ կերպով պարբերաբար միևնույն սկզբունքով վերակնքվում է նաև հաջորդ տարիներին, եթե Բաժանորդը սահմանված կարգով իր գրավոր դիմումի հիման վրա չի հրաժարվում Բաժանորդային պայմանագրի ավտոմատ վերակնքման ծառայությունից:
   1.2. Բաժանորդը կարող է հրաժարվել ավտոմատ վերակնքման պայմանից բաժանորդագրության պայմանագիր կնքելիս, ինչպես նաև ցանկացած ժամանակ մինչև պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը՝ ներկայացնելով դիմում Օպերատորի վաճառքի և սպասարկման սրահներում, Հեռախոսային սպասարկման ծառայության միջոցով կամ մուտք գործելով Օպերատորի պաշտոնական կայքի իր Անձնական գրասենյակ և սահմանված կարգով Անձնական գրասենյակում ներկայացնելով համապատասխան դիմում:
   1.3. Եթե «Ավտովերակնքում» ծառայության շրջանակում բաժանորդային պայմանագիրը ավտոմատ կերպով վերակնքվել է ևս մեկ տարով, ապա Բաժանորդը կարող է պայմանագրի ավտոմատ վերակնքման պահից սկսած 30 (երեսուն) օրվա ընթացքում առանց տուգանքի լուծել տարեկան պայմանագիրը:
   1.4. Եթե Բաժանորդը հրաժարվում է «Ավտովերակնքում» ծառայությունից, ապա պարտադիր բաժանորդագրության ավարտից հետո, Բաժանորդի պայմանագիրը դառնում է անժամկետ և սկսում են գործել «All in»/ «All in գործընկեր», «Wi-Fly»/«Wi-Fly գործընկեր» սակագնային փաթեթների, անժամկետ բաժանորդագրության պայմանները: «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելուց հետո Բաժանորդը ցանկացած օր կարող է կրկին դիմել «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացնելու համար՝ ներկայացնելով դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում, Հեռախոսային սպասարկման ծառայության միջոցով կամ մուտք գործելով Օպերատորի պաշտոնական կայքի իր Անձնական գրասենյակ և սահմանված կարգով Անձնական գրասենյակում ներկայացնելով համապատասխան դիմում:
   1.5. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.2 կետում ներկայացված ժամկետներում չի ներկայացնում դիմում «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելու վերաբերյալ, ապա Բաժանորդային պայմանագիրը ավտոմատ վերակնքվում է ևս մեկ տարով, Բաժանորդին շարունակվում է մատուցվել տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված Ծառայությունների առավելությունները, և Բաժանորդային պայմանագրի վաղաժամկետ լուծումը Կողմերից մեկի նախաձեռնությամբ կհանգեցի հրաժարագնի վճարման պարտավորության:
   1.6. Գործող բաժանորդը կարող է միանալ յուրաքանչյուր նոր հատուկ առաջարկի[1]՝ վերակնքելով գործող պայմանագիրը 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով: Այս դեպքում, անկախ նրանից, արդյո՞ք «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացված է եղել նախորդ տարեկան պայմանագրի շրջանակներում, թե ոչ, երբ գործող Բաժանորդը վերակնքում է իր գործող պայմանագիրը, ապա նախորդ տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվացված «Ավտովերակնքում» ծառայության ժամկետը ապաակտիվացվում է և նոր տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվանում է «Ավտովերակնքում» ծառայության նոր ժամկետ, եթե Բաժանորդը Ծառայություններին միացել է ավտոմատ վերակնքման պայմանով:
2. Բաժանորդի «Ավտովերակնքում» Ծառայության ակտիվացման/ապաակտիվացման ծանուցման ընթացակարգ:
   2.1. Բաժանորդին Օպերատորի կողմից ավտոմատ ուղարկվում է SMS հաղորդագրություն վերջինիս կողմից Բաժանորդային պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին՝ տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտից 60 (վաթսուն) օր առաջ՝ եթե,
   - Բաժանորդի մոտ պարտադիր տարեկան բաժանորդագրության ավարտից 60 օր առաջ ակտիվ է «Ավտովերակնքում» ծառայությունը, ապա Օպերատորը տեղեկացնում է, որ պարտադիր տարեկան

[1] Հատուկ առաջարկ, որը հասանելի է գործող բաժանորդների համար:

բաժանորդագրությամբ պայմանագիրը 60 օր անց ավտոմատ կերկարաձգվի նույն պայմաններով և Բաժանորդը կշարունակի օգտվել նշված պայմանագրով տրամադրվող առավելություններից:

2.2. Բաժանորդին Օպերատորի կողմից ավտոմատ ուղարկվում է SMS հաղորդագրություն վերջինիս կողմից Բաժանորդային պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ՝ տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտից 30 (երեսուն) օր առաջ՝ եթե,

- Բաժանորդի մոտ ակտիվ չէ «Ավտովերակնքում» ծառայությունը ապա Օպերատորը տեղեկացնում է, որ 30 օր անց պարտադիր տարեկան բաժանորդագրության ժամկետը կավարտվի և ծառայության սակագինը կբարձրանա և/կամ տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված Ծառայությունների առավելությունները կդադարեն՝ համաձայն անժամկետ սակագնային փաթեթների պայմանների, և կառաջարկվի ակտիվացնել «Ավտովերակնքում» ծառայությունը:

2.3. Եթե Բաժանորդը սույն պայմանների 2 կետով նշված կարգով պարտադիր տարեկան բաժանորդագրության ավարտից 60/30 օր առաջ ստացել է ծանուցում, որից հետո նրա մոտ ակտիվ Ծառայությունները կասեցվել են՝ Բաժանորդն ակտիվացրել է «Ժամանակավոր կասեցում» ծառայությունը կամ պարտքի պատճառով Ծառայությունները կասեցվել են Օպերատորի կողմից, ապա սույն կետում նշված 60 օրյա ժամկետը կերկարաձգվի Ծառայությունների կասեցված օրերի քանակով: